

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպեկով.  
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.  
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
կամ Тифлис, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և սոսն օրերէն).  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով.  
Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Նունէ Միքայէլեան Իգիթեանեան, Մարիամ Միքայէլեան Բուրդիկեան Իր դստեր-  
ներով, Նատալիա Աղէքսանդրեան և Յովհաննէս Միքայէլեան Շալաֆեանները յայտ-  
նում են իրանց ազգականներին ու ծանօթներին, որ կիրակի, յունիսի 6-ին

## ԴԱՆՈՒՅԻՆ ԴԱՆՈՒՅԻՆ

մահվան քառասունը օրը պատարագ կը մատուցվի և հոգեհանգստեան կարգ կը կա-  
տարվի ու Աւետեաց Զգրաչէն եկեղեցում: Պատարագն սկսվելու է ժամը 10-ին, իսկ  
հոգեհանգիստը ժամը 11 1/2-ին:

### ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պատերազմական բեմի պայմանները.—Ներ-  
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարդասիրական գործեր.  
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.  
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.  
—ՀԵՌԱԿԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ «Մուրճի» ըննադատին:

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատերազմական հեռագրերը հաղորդում  
են տեղեկութիւններ Լազուրեան թե-  
մակը մեղի ունեցած ընդհարումների  
մասին: Տեղեկութիւնները չը կան Պորտ-  
Արտուրի շրջանի մասին: Պէտք է են-  
թադրել, որ եսպոնացիները դիտմամբ  
չեն ցանկանում հրատարակել Պորտ-Ար-  
տուրի մօտ տեղի ունեցող թէ ծովային  
և թէ ցամաքային ընդհարումների մասին:  
«P. B.» լրագիրը յայտնելով, որ մօ-  
տենում են պատերազմող կողմերի վրձ-  
նական քայլերի օրերը, ասում է հետե-  
ւեան:

Շատ նշաններ ցոյց են տալիս, որ հե-  
ռու չէ կուրօսիլի և կուրօպատկիւր գոր-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### «ՄՈՒՐՃԻ» ԳՆՆԱԿԱՍԻՆ

Ոչ միայն միակողմանիութիւն, այլ կատա-  
րեալ թիրեմացութեան արդիւնք է այն բա-  
ցատուրութիւնը, որ պ. Յովհաննիսեանը տալիս  
է Արծրունու յարուցած մի հարցի առթիւ:

Գրիգոր Արծրունին իր առաջին յօդուածնե-  
րից մի երկուսի մէջ ասել է, որ Թիֆլիսում  
համալսարանը բաց անելը վաղաժամանակ է,  
որովհետեւ բարձրագոյն կրթութեան համար  
նպաստաւոր միջավայր չը կայ Թիֆլիսում:  
Այդ միջավայրը նա նկարագրել է մի լայն  
շրջանակի մէջ: Իսկ պ. Յովհաննիսեանը այն-  
պէս նեղացրել է այդ շրջանակը, այնպէս պատ-  
ճառաբանել է Արծրունու այդ յօդուածների  
շարժառիթը, որ դուրս է եկել մի կատարեալ  
կարբեկատուութեան: Օգտվելով այն հանգամա-  
նից, որ Արծրունին աննպաստ պայմաններից  
մէկը համարել է ասիացի ծնողների բռնակա-  
լութիւնը, պ. Յովհաննիսեանը ուզում է ասել,  
որ եթէ Արծրունու հայրը չը լինէր բռնակալ,  
նա այդպիսի միտք չէր յայտնի: «Կարծէք,  
թէ ամեն մի հայ ծնող նոյնպիսի բռնակալ էր,  
ինչպէս Գրիգոր Արծրունու հայրը», ասում է  
նա: Բայց միթէ, ճիշդ որ, պ. Յովհաննիսեա-  
նը հաւատացած է, թէ մի հատ բռնակալ հայր  
կար մեղանում, և դա Արծրունու հայրն էր:  
Եթէ այդ այն ժամանակ հարցնում ենք. մը-  
տեղից վերցրեց պ. Սունդուկեանը իր «Ելի  
մէկ Զօհի» նիւթը, և Միքայէլը, Անանիին իրանց  
ծնողների հետ տրվելու են թէ ոչ: Երևոյթը  
ընդհանուր էր, և բանը չէ փոխվում նրանից,  
եթէ Արծրունու հայրն էլ ամեն բռնակալնե-  
րից մէկն էր: Կարելի էր այն էլ, թէ որքան  
ընդհանրացած երևոյթ էր այդ հայրը: Եւ ա-  
սել, թէ Արծրունին մի ընդհանուր երևոյթ  
լու ըմբռնել էր այն պատճառով, որ ինքն էլ  
մի բռնակալ հօր օրդի էր, նշանակում է ո-  
չինչ չասել:

քեր լուրջ ընդհարումների ժամանակը:  
Ըստ երևոյթի կուրօսիլի շտապում է  
գրաւել Թիֆլիսի լեռնաշղթան, քանի  
որ չէ սկսվել անընդհատ անձրևները շը-  
շանք: Թիֆլիսի զամբում է Լաօեանի  
և Թիֆլիսեանի միջև: Եթէ կուրօսիլ  
գրաւէ Թիֆլիսի լեռնաշղթան, նա  
կամրացնէ իր դիրքը հարաւային Ման-  
շուրիայում, նպատակ դնելով մի կողմից  
արգելք հանդիսանալ, որ գեներալ Կուր-  
պատկիւր առաջ չը շարժվի դէպի հարաւ,  
միւս կողմից կարելի Մուկդէսի մօտ ու-  
սաց գործը իր յենակէտից:

Իսկ գեներալ Կուրպատկիւր, գրաւե-  
լով Թիֆլիսի լեռնաշղթան, ըստ երե-  
ւոյթի վճռել է չը սահմանափակել իրան  
անցքերի պաշտպանութեան կրաւորական  
դերով, այլ դիմել յարձակողական գոր-  
ծողութիւնների: Երկայնում Պայչինից  
և Լաօեանից դէպի Թիֆլիսեան զնա-  
ցող ճանապարհների վրա գործում են  
ուսաց կողմից ոչ միայն կողակները և  
կամաւորների վայրերը, այլ և զօրաւոր  
և թիգրանթաճիգներ: Այդ բոլորը ապա-  
ցուցանում է, որ ներկայ գործողութիւն-

ընդհանրապէս հաւատացնում է, որ  
Արծրունին չէր գրի այդպիսի յօդուած, «եթէ  
մի քով մոռանար սեփական կեանքի առանձ-  
նայատուկ պայմանները»: Շատ լաւ, հետեւե-  
ր պ. Յովհաննիսեանի ցուցմունքին և դէն գցե-  
նաճանակը, այսինքն ծնողական բռնակալու-  
թիւնը: Միթէ այնուհետև ոչինչ չի մնայ Արծ-  
րունու մտքի պաշտպանութեան համար: Օ,  
գեո շատ բան կը մնայ, պ. Յովհաննիսեան:

Կանգնել մի փոքրիկ կէտի վրա, երբեք  
ցուցութիւններ հանել բաւերի մի յայտնի խմբից  
միայն, իսկական ըննադատութեան անարժան  
մի մեթոդ է: Պէտք է որոնել ողիւն, պէտք է  
հեղինակի միտքը ամբողջացնել այն նիւթե-  
րով, որ տալիս է նա: Արդ մեզ հետաքրքրող  
հարցում Արծրունին ունի մի հայեացք, որ  
կարող ենք ասել, առաջին անգամն էր արտա-  
յայտվում մեզանում: Համալսարանական կը-  
թութիւն ստանալը նա բաւական չէր համա-  
րում. դիպումը նրա համար ամեն ինչ չէր: Նա  
պահանջում է «բացված» մարդիկ, այսինքն  
լայն զարգացում ստացած ինտելիգենցիա:  
Ունենալով այսպիսի հայեացք, Արծրունին չէր  
կարող ընդունել, թէ Թիֆլիսը յարմար միջ-  
ավայր է «բացված» մարդիկ պատրաստելու հա-  
մար: Թողնել, որ խօսէ ինքը, Արծրունին  
Այսպիսով ասելի հեղու կը լինի ցոյց տալ, թէ  
որքան լաւ է պ. Յովհաննիսեանը ըմբռնել իր  
կարգացած գրքերը:

Եւ ասում եմ—գրում է Արծրունին—որ երկու-  
սորի համար ասելի հեղու է իր խելը զարգացնել  
իր գերդաստանից հեռու ապրելով, քան թէ իր ծնող-  
ների մօտ մնալով:—«Ինչի՞նչ է այդպէս, կասեն ինձ,  
միթէ չէ կարելի սովորել ամեն տեղ»: Այդ ճշմարիտ  
է, պատասխանում եմ ես, բայց մարդը բացվելու ու  
առաջ գնալու համար բաւական չէ որ սովորէ, հար-  
կաւոր է նմանապէս, որ նա և շատ բան մոռանալ:  
Եւ մոռանալ մինչև անգամ ասելի դժուար է քան թէ  
սովորել: Ի՞նչ է հարկաւոր մեզ մոռանալ: Հարկաւոր  
է մոռանալ գերդաստանի մէջ ստացած թիւր և ցուրտ  
մտքերը, բարբերի և վարբի կոպտութիւնը և երե-  
խայութիւնը զվի մէջ արմատացած նախապաշար-  
մունքը:

Գերդաստանը, շարունակում է Արծրու-  
նին, կարող է լաւ ազդեցութիւն ունենալ, եթէ

ները, անկասկած, կրում են լուրջ բնա-  
ւորութիւն: Գեներալ Շտակելբերգի կա-  
տարած մի քանի արշաւանքները դէպի  
հարաւ ցոյց են տալիս, որ մանջուրա-  
կան զօրքի գլխաւոր հրամանատար Կու-  
րպատկիւր ներկայումս օգտվում է ամեն  
մի յարմար առիթից սկսելու յարձակո-  
ղական գործողութիւններ և իրան վերա-  
պահելու առաջխաղացութեան նախաձեռ-  
նութիւնը:

Չը նայելով ամեն տեսակ դժուարու-  
թիւններին, «H. B.»-ի ասելով, նորանոր  
գործեր են շարժվում Ռուսաստանից դէ-  
պի պատերազմի բեմը: Գնացել են սի-  
բիրական զօրքերը, գնում են տաւաներորդ  
և տաւանթօթերորդ զօրաբաժինները, կը  
գնան և միւսները: Որքան շատանում են  
զօրքերը, այնքան էլ մեծանում է նրանց  
տեղադրելու հոգը և բարդանում է ին-  
տենդանտային, բժշկական և ուրիշ կար-  
գի ինստիտուտների համար գործը: Ուստի  
միջոցները մասամբ բերվում են Ռու-  
սաստանից, մասամբ նայթիայթվում են  
տեղական միջոցներով: Չինացիները օգտ-  
վում են դէպքից չափազանց թանգացնե-  
լու իրենք կամ թաղացնելու իրանց ունե-  
ցած պաշարները: Իսկ եսպոնացիները  
թէ և շատ միջոց ստանում են ուրիշ տե-  
ղերից, շնորհիւ լաւ հաղորդակցութիւն-  
ների, այնուամենայնիւ նրանք էլ անկա-  
րող են ամանց տեղական պաշարների  
գլուխ տանել իրանց գործերը: Իսկ քա-  
նի պատերազմը առաջ է գնում, այնքան  
տեղական պաշարները ասելի ու ասելի  
սպաւում են: Ահա պատերազմական  
բեմի կարեւոր հոգեբերից մէկը առաջխա-  
լում:

Ծնողները և մանաւանդ մայրերը այնքան ազե-  
լը լինեն: Միգրանտ կանայք նոյն իսկ ծա-  
կում են իրանց երեւոյ:

Գիտէք սա ինչ է նշանակում, երբ որ կամաւոր  
ստիպված է իր երեսը ծածկել: Սա նշանակում է, որ  
հայրը հաւատ չէ ընծայում իր աղջկան, մարդը չէ  
հաւատում իր կնոջը...

Պ. Յովհաննիսեանը հաւատացած է, որ  
ընտանեկան կեանքն է թելադրել Արծրունու  
ասել, թէ համալսարան Թիֆլիսում հարկաւոր  
չէ: Յոյս ունենք, որ պ. ըննադատին յայտնի  
կը լինի, որ Արծրունու ընտանիքում ոչ ոք  
երես չէր ծածկում, որ Արծրունու թէ ծնող-  
ները և թէ պաշարները կրթված դաս-  
կարգին էին պատկանում: Հարց է լինի իրա-  
ւունքով նա կարծում է, թէ անձնական կեան-  
քի պայմաններն են այդպիսի միտք ներշնչել  
Արծրունու:

Բայց շարունակենք փաստեր բերել: Մեծ,  
բազմաթիւ թիւք կենդանիներով գոյութիւն  
ունեցող համալսարանները ինչ առաւելութիւն-  
ներ ունեն: Այդտեղ կան գրադարաններ,  
թանգարաններ, գիտական ընկերութիւններ:  
Այդտեղ, օրինակ, իրաւաբան ուսանողը մի-  
շոյն ունի ծանօթանալու այս կամ այն երեւի  
իրաւաբանի հետ, իսկ այդ ծանօթութիւնը կը  
նպաստէ ուսանողի զարգացման:

Մի և նոյն ժամանակ բացի ընկերութիւններից և  
վիճաբանութիւններից կայ և հասարակական կրի-  
ստիկա: Ուսուցիչը հրատարակում է իր դասախոսու-  
թիւնները, հրատարակում է իր ատարակային կեան-  
քը զարգացած է, կը գտնվեն անընդուն մարդիկ ո-  
րոնք գրել վրա կրիստիկա կը գրեն, նմանապէս և  
օրագրիները այն գրել մասին կը խօսեն, դատողու-  
թիւն կանեն: Ուսանողը ուրեմն ստիպված չէ ստիպա-  
բար հետեւել ուսուցչի մտքերին. նա ամեն ժամ, ա-  
մեն րօպէ հասարակութեան մէջ օգնութիւն է ստա-  
նում իր անձնական մտաւոր համոզմունքը զարգաց-  
նելով:

Շարունակենք, պ. Յովհաննիսեան: Մի  
կտոր էլ բերենք:

Ուրեմն եթէ հիմնվել էր համալսարան Թիֆլիսում,  
նրա հիմնելու հետեւները կը լինէին առաջին, որ  
երկուստեքները չէին կարողանայ հիմնաւորապէս  
պարագի իրանց ուսմամբ, որովհետեւ գործնական  
միջոցներ չը կան, երկրորդ, որ նոքա բացված չէին

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՒԾՆԵՐ

Այս ամսվայ ընթացքում ես առիթ ունեցայ  
երկու անգամ հոգեպէս հրճվելու, բարոյապէս  
միւթարվելու. մի բան, որ շատ քիչ է վիճակ-  
վում մարդկանց մեր գործնական և շահաւէր  
կեանքի առօրեայ հոգեբերի և մտազբաղումների  
մէջ:

Առաջին հոգեկան հրճուանքը, բարոյական  
խոր սփոփանքը ես ստացայ Բագուում, երբ  
այցելեցի Բագուի Հայոց Մարդասիրական Ըն-  
կերութեան հիմնարկութիւնները: Երկրորդ հո-  
գեկան հրճուանքը ես ստացայ, երբ այս օր-  
իսի 23-ին, կիրակի, այցելեցի Թիֆլիսի Մա-  
ղի թաղում հիմնված խուրի և համբերի գրա-  
րոցը:

Կարող եմ համարձակ ասել, որ ամբողջ մեր  
երկրում Բագուի Հայոց Մարդասիրական Ըն-  
կերութեան ձեռնարկած հիմնարկութիւնների  
և Թիֆլիսի խուր-համբերի գրարոցի նման իս-  
կական մարդասիրական և բարեգործութեան  
զաղափարը ամենապատկաւարմար կերպով  
իրագործող հիմնարկութիւններ չը կան:

Արժէ ծանօթանալ նրանց հետ. արժէ լայն  
պրօպագանդա անել նրանց մասին. արժէ հա-  
սարակութեան լուրջ և լուսաւոր ուշադրու-  
թիւնը հրաւիրել նրանց վրա: Ով կամենում է  
իսկական բարեգործութիւն անել, ով կամե-  
նում է խրախուսել աղիւս աշխատութիւնը,  
ով կամենում է մասն ունենալ հարկաւոր  
տանջվող, հեծեծող կեանքերի սփոփում, ա-  
պաքինման գործի մէջ, թող շտապ օգնել իր  
կարողութեան չափ այդ հիմնարկութիւններին,  
թող միջոց և հնարաւորութիւն տայ իր լու-  
սայով այդ հիմնարկութիւնների վարչնե-  
րին ասելի լայն ծաւալով, ասելի մեծ եռանդով  
գործելու, թող իր բարոյական և նիւթական

կարող լինել որովհետեւ միջոց չէին ունենայ. ինչ-  
պէս օտար քաղաքներում զարգացած հասարակու-  
թեան հետ յարաբերութիւններ չեն ունենայ:

Ահա ինչքան բաներ ունեն Արծրունին  
Թիֆլիսի համալսարանի դէմ, անկախ ծնողա-  
կան բռնակալութիւնից, որ, պէտք է նկատել,  
այնքան մեծ տեղ չէ բռնում Արծրունու պատ-  
ճառաբանութիւնների մէջ, այլ միայն ան-  
նպաստ հանգամանքներից մէկն է: Հերքել  
հարկաւոր էր զիտաւոր միտքը, սկզբունքի  
հարցերը: Պ. Յովհաննիսեան ասելի հեղու է հա-  
մարել անձնական կեանքի հանգամանքներով  
բացատրել այդքան բազմակողմանի ապացոյց-  
ների մէջ դրած միտքը: Եւ բոլորովին տար-  
ված այդ իր մոլորութիւնից, պ. Յովհաննի-  
սեան ասում է. «Եթէ Արծրունին դպրոցում  
սովորած լինէր, նա կը հասկանար, թէ ինչ  
ահալին նշանակութիւն ունի մի հասարակու-  
թեան համար այս կամ այն դպրոցի, մանա-  
ւանդ բարձրագոյն դպրոցի գոյութիւնը:

Այս խօսքերի դէմ մենք կասենք. 1) Արծ-  
րունին սովորել է դպրոցում,—թող պ. Յով-  
հաննիսեանը դիմէ Երեւեանին, որ նկարագ-  
րել է Արծրունու գիմնադրական տարիները:  
2) Արծրունին շատ լաւ հասկանում էր դպրո-  
ցի հասարակական նշանակութիւնը. իբրեւ ա-  
պացոյց, ցոյց ենք տալիս շատերից մէկը մի-  
այն, «Բանի մի մտքեր» յօդուածը, որ անցո-  
ղակի յիշում է պ. Յովհաննիսեանը, առանց  
հարկաւոր ուշադրութիւն նուիրելու նրա շատ  
լայն ու առաջնային բովանդակութեան:

Այժմ անցնենք «Մուրճի» ըննադատի միւս  
վճիռներին:

«Որ հայը պէտք է հայերէն իմանայ և սո-  
վորի, դա արքայի չէ Արծրունու համար,—  
ասում է պ. Յովհաննիսեան.— և նրանք, ո-  
րոնք այդ բանը ինքնուրուքեան հասկանալի  
և անհրաժեշտ բան են համարում, դատարկ  
իդէալիստներ են նրա աչքում»:

Թող ներէ մեզ պ. Յովհաննիսեանը, եթէ  
մենք այստեղ փոքր ինչ խիստ կը վերաբեր-  
վենք դէպի նրան այդ խօսքերի առիթով: Նա  
զրպարտել է Արծրունուն: Եւ այդ զրպարտու-  
թիւնը անհերքելի պիտի լինի, քանի որ զրպարտ-

աշխատանքները խրախուսել մի համակրելի և օգտակար գործունեություն:

Երկար տարիներ Բագուի Մարդասիրական Ընկերությունը իր միասին—առաջնականորեն և կարօտանքներին օգնելու և խնամելու—կատարում էր այն ձևով, որ ակամայ հարց էր դրվում. արդեօք նպատակին են հասնում տեղական նպատակները, արդեօք կատարվում է իսկական բարեգործություն: Կարօտանքները և առաջնականները, կամ գեթ այդպես իրանց անուանողները դիմում էին ընկերության և սա իր պարտավորությունը կատարած էր համարում: Խաղաղ նրանց որոշ չափով դրամական նպաստ. բայց դա չէր փրկում առաջնականները. կարօտանքը երկրորդ օրը դարձնում էր մի և վերջի վերջը դառնում էր արհեստով մուրացկան: Նոյն կերպով գործում էին և մեր մեծ քաղաքներում հիմնադրվածները, և հետևանքը լինում էր զրո. հասարակական զբոսանքները ծախսվում էին, բայց մուրացիկների թիվը աճում և ոչ մի ցույց չէր սփռվում արմատապես, ոչ մի կարիք չէր հոգացվում հիմնապես: «Մենք առեւի անբարոյականացում, փչացում ենք նրանց, յուսահատ ասում էին ընկերությունների վարիչները. մենք սովորեցնում ենք նրանց պարագլուխներ, ձրիակերություններ: Բայց առանձին կարգը շարունակվում էր:

Ո՛րն է այն իսկական եղանակը, որով բարեգործությունը կարողանա հասնել իր նպատակին—բուժել վերքերը, ամբողջ ցանկը, ընկալել նորեր վրա կանգնեցնել: Այդ եղանակը վաղուց քաղաքակրթի եւրոպացիները է. ստեղծեցին աշխատություններ, հայտնաբերեցին նրանց համար մարդկային պայմաններ, առողջապահական, բարոյական միջոցներ. սույնը նրանց հնարավորությունը զգալ, որ իրանք մարդկության մեծությունը չեն, որ իրանք հասարակության համար բեռ չեն, որ իրանք ապրում են իրանց ձեռքի աշխատանքով, որ կարող են վերադառնալ դարձնալ հասարակության մեջ, լինել պիտանի անդամներ, գործել, թէև լինեն հաշմանդամ, խուլ, համր, կոյր: Մի մեղքն էր կարօտանքի մեջ մարդկային արժանապատուության գեղացումը:

Սակայն այդպիսի պայմաններ ստեղծելու մեջ աշխատությունը, սովորական գործունեություն է պահանջում, մինչև դրամով նպաստ տալը շատ դժուարացնում է բարեգործական հիմնադրությունների վարիչների գործը: Շատ ուրախալի է, որ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերությունը վարիչները կամ չեն ասել այդ դժուարությունների առաջ. չը նայելով, որ ըն-

ված է մի մարդ, որ իր կենքի ընթացքում, մինչև վերջին շունչը, մայրենի լեզուի հզոր պաշտպան է հանդիսանում: Հաւատարմորեն ենք, որ եթէ պ. Յովհաննիսյանը շուրջ արած լինէր կարգաւոր գործ «Մշակի» առաջին տարին, իմացած լինէր, թէ ինչ բանակուր է մղել Արծրունին «Толоск»-ի, «Казка»-ի և ուրիշների գեղ մայրենի լեզուի իրաւունքները պաշտպանելու համար, նա առնուառկա կը դժուարանար այդքան համարձակութեամբ այդ տողերը գրելու: Բայց «Մշակի» առաջին տարիներին, մենք կը յանձնարարէինք պ. Յովհաննիսյանին այն աշխատանքը, որ Արծրունին կարգաւոր է հայոց ուսուցչական ժողովում, որ յետոյ տալից «Մշակում» և մինչև իսկ Արծրունու հակառակորդների ծափահարութեան արժանացաւ, ապա կառավարվելիք պ. Յովհաննիսյանին ցույց տալ մեր նոր գրականությունը մէջ առելի պերճախօս, առեւի համոզիչ մի գրություն: Բայց զգուշ ենք, որ պ. Յովհաննիսյան կարող է խուսափել մեր այս պահանջներից, աւելով, թէ ինքը գործ ունի միայն Արծրունու աշխատությունների առաջին հատորի հետ: Շատ լաւ, տեսնենք հենց այդ հատորի մէջ ինչպէս է ներկայանում այն գործը, որին այդպիսի կերպարանք է հաղորդել պ. Յովհաննիսյանը: «Դրականություն չը կայ» յօդուածի մէջ Արծրունին երկար զբաղվում է այն հարցով, թէ ինչո՞ւ. պէտք է սովորել մի որ և է լեզու: Բերում ենք այդ յօդուածի ամբողջ վերջին, շարքորդ գլուխը:

Ուրեմն կրկնում այժմ ինչ որ ասել եմ: Մարդիկ երբ նպատակով են սովորում որ և ինչ լեզու. առաջինը, որ կարողանան իրանց հասարակության հետ յարաբերություններ ունենալ, երկրորդ, ծանօթանալ այն հասարակության գրականության հետ, և երրորդ, որ կարողանան իրանք այն հասարակութեանը նրա լեզուի միջոցով իրանց միտքը յայտնել, որ և ինչ մտաւոր աշխատանք կատարելով:

Իսկ մենք, հայերս, այն նպատակով չենք սովորում մեր լեզուն, որ յարաբերություններ ունենանք, որովհետեւ ինչպէս միմեանք հետ, նորնպէս և ուրիշ ազգերի հետ մենք մեր յարաբերությունները թէ բարոյական, թէ ուսումնական, թէ քաղաքական, թէ վա-

կերութեան նոր կանոնադրությունը առեւի սահմանափակել է ընկերության գործունեությունը շրջանակները, բայց նեղ շրջանակներում ևս կարելի է գործել և լաւ գործել. բաւական է միայն, որ գործելու համար կամք և ցանկութեւն լինի: Նոյն դժուարությունների առաջ կանգ չեն առել և նրանք, որոնք ստեղծել են թիֆլիսի Սպիտակ խուլերի և համրերի դպրոցը, մի վերին աստիճանի համակրելի և օգտակար հաստատություն:

Յաջորդ անգամ մենք կը ծանօթանանք հասարակութեանը այդ իսկական մարդասէր հիմնադրություններին հետ:

Հ. Առաքելյան

ՆԱՄԱԿ ԵՄԻՍԿՐԻՍԻՆԻՍԻ

Թիֆլիս, յունիսի 4-ին

Մարդիկ թող տալ ինձ յայտնել հետեւեալը. «Մշակի» այս տարվայ Ձե 94-ում տպւած նամակից յետոյ ես ստացայ Պարսկաստանի հայոց գրադարանների համար նուէրներ 1) 21 կտոր գիրք ներսէս բանալի Վանդանից, 2) 2 հատ «Հրաշալի դար» Ըօլլէսի, թարգմ. Ս. Լիւնցեանի, պ. Սմբատ Ծանաղլից, 3) 26 կտոր գիրք—պ. Ս. Մարգարիտից, 4) 122 կտոր գիրք ուսանելի, ֆրանսերէն իշխանուհի Մ. Քուստանից և 5) «Գիտութեան» գրախանութից 20 կտոր: Այս գրքերը նորնպէս կուղարկվին նախկին նուէրվածների հետ Պարսկաստան:

Առիթից օգուտ եմ քաղում յայտնելու նաեւ, որ շուրջից Բագուի-թէկ թիւնիւթեան գինով 670 օրինակ Արեւելոցութեան դէմ ըրօշիւրէց (100 րուբլու), ինչորեւ է տարածել այդ 670 օրինակը ձրիաբար դիւրեւում և հասարակութեան չքաւոր խաւերի մէջ: Դրանից 200 օրինակ ուղարկել եմ Լարսի լիւթարի դպրոցը: Մերէն քանանայ խանգուստանին և 200 օրինակ՝ Ալեքսանդրապոլ ներսէս բանալի Նիկողոսյանին, գիւղերում և քաղաքում ձրիաբար բաժանելու. մնում է ինձ մօտ դեռ 270 օրինակ: Այդ պատճառով խնդրում եմ ցանկացողներին, որոնք յանձն կանեն դիւրեւում և դաւանելու տարածել ձրիաբար այդ բրօշուրը, դիմել ինձ և յայտնել իրանց պատրաստակարմութիւնը:

Հ. Առաքելյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ ներկայ ամսուայ ընթացքում մեր երկրում տեղի կունենան մի շարք հնագիտական ուսումնասիրություններ: Երևանեան և Քուսթայիսի նահանգներում: Այս ամառ կը լուսանկարվեն Հայոց Չորի հնուածիւնները, որոնք ստան Նիկոսի և պարունակում իրանց մէջ թէ պատմական, թէ կենցաղավարական և թէ մասամբ ճարտարապետական տեսակետներով: Այսին շրջանում կատարվելիք ուսումնասիրությունների մասին մենք արդէն յայտնել ենք մեր ընթերցողներին:

ճառականական, թէ ընտանեկան,—մենք մեծ մասով օտար լեզուների միջոցով ենք կատարում: Մենք այն նպատակով ևս չենք սովորում մեր լեզուն, որ գրականութեան հետ ծանօթանանք, որովհետեւ նոր գրականութեան չը կայ, իսկ հին գրականութեանը թէպէտ կայ և հարուստ է մինչև անգամ, բայց մեր այժմեան հարկաւորութիւններն յարմար չէ: Եւ կարող բաւականացնել մեր այժմեան պահանջներին ու մեր մտաւոր և նիւթական աշխատանքին օրինաւոր ուղղութիւն չէ կարող տալ:

Նմանապէս այն նպատակով ևս չենք սովորում հայկական լեզուն, որ ինչ և ինչ մտաւոր աշխատանք կատարենք, գրենք կամ օրագիրենք հրատարակենք,—որովհետեւ այդ բաների պահանջները չենք տեսնում հասարակութեան մէջ: Եւ ազատցոյցը, որ այդ պահանջները չը կայ հասարակութեան մէջ, այն է, որ մեր մէջ ոչ ոք չէ կարող ապրել ու իրան կերակրել ոչ հայկական գրքեր գրելով կամ թարգմանելով և ոչ ևս հայկական օրագիր հրատարակելով:

...Ուրեմն ինչի ենք սովորում հայկական լեզու: «Վայ... Այդ էր պակաս... Հայեր ենք ու հայերէն չը սովորեցինք...»

—Եւ ձեզ չեմ ասում թէ հայերէն մի սովորեք, բայց եւ ձեզ հարցնում եմ, ի՞նչ նպատակով եք սովորում հայկական լեզու կամ ինչ օգուտ եք քաղում այդ լեզուն սովորելուց:

«Ի՞նչ է ասում... Օգուտը ընդ է... Հայ եւ—պէտք է հայերէն սովորենք»:

Սա պատասխան չէ:

Պարզ է Արծրունու միտքը, չէ: Լեզուն հասարակական և ընտանեկան յարաբերությունների գործիք, լեզուն գրականութիւն, լուսաւորութիւն ստեղծող, լեզուն՝ ժամանակակից պէտքերը և կարօտութիւնները լրացնելու միջոց:

Այս միտքը Արծրունին առեւի պարզել է իր «Իդէալիստներ» յօդուածում: Պ. Յովհաննիսյանի ձեռքով մոլորութեան մէջ ընկած ընթերցողներին առաջնորդելու համար ստիչված ենք այստեղ մի մեծ կտոր էլ այդ յօդուածից բերել:

Երբ որ եւ ձեզ հարցնում եմ.—ինչ նպատակով եք սովորում հայկական լեզուն կամ ի՞նչ օգուտ եք քաղում այդ լեզուն սովորելուց.—Դուք ինձ պատասխանում եք, «Օգուտը ընդ է... հայ եւ, պէտք է հայերէն իմանաս»:

Մենք «Իդէալիստներ» չենք միթէ, երբ—մեր սե-

Նշանակների զովութեան պատճառով այս տարի ամարանոց քննարկները չեն շտապում քաղաքից հեռանալ: Թիֆլիսի շրջակայքում շատ ամարանոցներ մնացել են դեռ չը վարձված: Այս տարի ցրտերի պատճառով ուշացել է և միջոց թիֆլիսի վաճառանոցում: Ամեն բան 10—15 օրով յետ է մնացել:

Մեզ խնդրում են յայտնել, որ Թիֆլիսի Հայունեաց բարեգործական Ընկերութեան տրվելիք գարնանային զբոսանքը յետաձգվում է մինչև ներկայ տարվայ սեպտեմբեր ամիսը:

Թիֆլիս են եկել հետեւեալ նահանգապետները. Երևանից—գաղտնի խորհրդական Բաբոյ Կ. Փ, Տիգրանաւոյէն, Քուսթայիսից—գեներալ-մայոր Ս. Ա. Սմազիս և Բագուից—իսկական պետական խորհրդական Մ. Ա. Նաւալի: Այդ նահանգապետները, նահանգների հաշտարար միջնորդները, ազնուականութեան պարագլուխները և ուրիշները հաւաքվել են Թիֆլիսում և մասնակցում են մի անգամ արդէն յիշված «Ժամանակագրական պարտական գիւղացիների» ընկան բերքերով վճարվող հարկերը փողային վերածելու և նրանց հողատիրները հողատիրներից յետ գնելու համար կազմված խորհրդակցությունները:

Դարան սկզբներին Աբաշա կայարանում, Բաթումի գծի վրա, պատահած յանդուգն գողութեան հետքերը բացվում են: Գուստի վաղուց կողոպտած 100,000 րուբլի գումարի մի մասն արդէն գտել են և, ինչպէս երևում է ընթերցողներին ընթացից, բայց են արել գործի բոլոր մանրամասնությունները:

Հետաւոր Արեւելքի պատերազմի պատճառով Անգրիկովկասի զինամուօյական տնտեսական կարիքների համար նշանակված գումարը կըրճատված է այս տարի 279,276 րուբլով:

Լրագիրների տակով, ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը կրթական շրջաններին կարգադրութիւններ է ուղարկել, որ յունարեն լեզուն գիմնաւորաներ 5 դասարաններում աւանդվի նոյն իսկ այն դէպքում, երբ այդ լեզուն սովորելու ցանկութեան յայտնի է մինչև անգամ միայն մէկ աշակերտ: Այդ լեզուի դասատուի վարձատրութիւնը տրվելու է դպրոցի սովորական բիւջէտից:

Թիֆլիսի քաղաքագլուխ իշխան Արդու-թեան երկայնաբազուկի հրաժարվելուց յետոյ՝ նրա պաշտօնը ժամանակաւորապէս վարում է

փական լեզուն այն նպատակով չենք սովորում, որ նորանից օգուտ քաղենք, որ նորա միջոցով մտքեր յայտնենք, յարաբերություններ ունենանք, նորա միջոցով ուսուցանենք, նորա միջոցով գրագիտենք մեր խելքը գրքեր կարգաւոր, կամ յայտնենք մեր մտքերը գրքեր գրելով:

Մենք «Իդէալիստներ» չենք միթէ, եթէ մենք մեր սեփական լեզուն սովորեցնող ոչինչ օգուտ չենք քաղում, բայց այնու ամենայնիւ սիրում ենք նորան:

Մենք «Իդէալիստներ» չենք միթէ, եթէ մենք մեր լեզուն միայն այն նպատակով ենք սովորում, որ սովորենք մեր լեզուն Ոչ, մենք ազգասիրութեան պատճառով ենք սովորում մեր լեզուն:

Հասկանում եք դուք արդեօք, ինչ է ազգասիրութիւնը:

Ազգասիրութիւնը այնպիսի գգադման է, որով մարդը պարտավորվում է «օգտակար» լինել իր հասարակութեան:

Ուրեմն, սա ամենիկն ազգասիրութիւն չէ, երբ որ մարդը իր ազգի լեզուն իմանալով ոչինչ «օգուտ» չէ քաղում այդ լեզուն ուսումնից, ուրեմն իր լեզուն իմանալով ոչինչ «օգուտ» չէ բերում, ուրեմն «օգտակար» չէ լինում իր հասարակութեանը:

Ահա ինչից ինչ է դարձել պ. Յովհաննիսյանը. Բայց նա մի միջոց էլ ունի իր ձեռքին: Արծրունին մի տեղ ասել է թէ լեզուն միջոց է և ոչ նպատակ: Այստեղ էլ պ. Յովհաննիսյանը վերցնում է մի երկու երեք բառ և նրանց վրա հիմնում է իր եզրակացութիւնը: Տեսնենք այդ միջոցի անկարողութեան մի նոր փաստն է:

«Հայկական Աշխարհի» խմբագիր Ստեփաննիս Նորաձեռնութիւններ էր մտցրել իր ուղղագրութեան մէջ. օրինակ, նա գրում էր «հոնւ-վար» և ոչ «յունւվար»: Այս առիթով շատ զգուշութիւններ էին լուրում Արծրունին, պատասխանելով Ստեփաննիսի նամակին, ասում է թէ. «Եւ ո՞նի մեծ գին չեմ դնում, լեզուին մեծ նշանակութիւն չեմ տալիս յօդուածի մէջ: Թող լեզուն հասկանալի լինի... այդ բաւական է: Առհասարակ կասում, ո՞նք և լեզուն մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, երբ որ ազգի գլխաւոր պահպանութիւնը սովորութիւնն է»: Յետոյ նա աւելացնում է. «Եւ հայկական լեզուի վրա չեմ նայում որ-

իշխան Չերքեզով: Հիմա պ. նահանգապետ հարց է առաջարկել քաղաքային վարչութեանը, թէ երբ է նշանակված նոր քաղաքագլխի ընտրությունը: Այժմ քաղաքային վարչութիւնը մտցրել է քաղաքային խորհրդի ներկայ յու-նիսի 7-ի նիստի հերթական հարցերի մէջ այդ հարցն էլ:

Թիֆլիսի դատաստանական պալատում ներկայ յունիսի 17-ին նշանակված է, մեր ընթերցողներին արդէն յայտնի՝ շուշեցի ուսանող Մատուրիանի, Շուշու բնակիչներ՝ Լահրամանեանի, Դանիէլեանցի և Սահակեանի մեղադրութեան գործի ընտրությունը: Դան-ձակի նահանգական դատարանից այդ գործը տրվել է Թիֆլիսի դատաստանական պալատը պրօկուրորի բողոքով, որը զգուշ էր մնացել նահանգական դատարանի արդարացուցիչ վճռից: Գործը պաշտպանում են երեւեալ հաւատարմատար պ. Ստալ (Մօսկվայից) և օգ-նական պ. Լորդանեան (Թիֆլիսից):

«НОВ». լրագիրը հաղորդում է, որ վճռված է Թիֆլիսում հրաւիրել երկաթուղիների բը-ժիշկներին խորհրդակցական ժողով: Ժողովը նպատակը լինելու է անդամներին ծանօթացնել լեռնային աստաօրիաների պայմաններին հետ և դիտել մօտակայ կուրօրտները: Ժողովի զբաղմունքի առարկաների մէջ մտնում են. 1) Հարեցողութիւնը և նրա դէմ միջոցները եր-կաթուղիների ծառայողներին մէջ. 2) մանկա-բարձական օգնութեան գործը երկաթուղիների վրա. 3) Սիֆիլիսի տարածումը երկաթուղի-ների վրա. 4) վնասբաւական ախտերը երկաթու-ղու ծառայողների մէջ և միջոցներ նրանց դէմ կուրելու և ուրիշ շատ հարցեր:

Ներկայումս ժողովրդական լուսաւորութեան գիտական կոմիտէն մշակել է քաղաքային ուսումնարանների համար նոր ծրագիր: Այդ ծրագիրն ուղարկվել է քաղաքային դպրոց-ների մանկավարժական խորհուրդներին, որ-պէս զի նրանք քննութեան ենթարկեն և ի-րանց եզրակացութիւններն ու դիտողութիւն-ները յայտնեն: Ամեն կողմից ստացվել են շատ նպաստաւոր կարծիքներ. բոլորը համարում են, որ ծրագիրն առեւի զարգացուցիչ և աշակերտ-ների ընդհանուր գիտելիքներին սանձանք, նը-րանց մտաւոր հորիզոնն առեւի ընդարձակող, բան գոյութիւն ունեցող ծրագիրը:

Պետերբուրգում կազմակերպվում է ժողովրդական աշխատանքը կարիւրելու մի ընկերութիւն: Ընկերութեան կոմիտէն, ինչ-

պէս նպատակի վրա, բայց ինչպէս միջոցի վրա: Ոչ թէ կարգաւոր հայերէն, որովհետեւ «հայեր ենք», այլ կարգաւոր հայերէն, որով-հետեւ հայերէն առաւել լաւ ենք հասկանում բան թէ ուրիշ լեզու: Օրագիր հրատարակե-ցէք ոչ թէ այն նպատակով, որ ընթերցող-ներից «հայաւերներ» և «ազգաւերներ» չը-նենք,—բայց այն նպատակով, որ հայերից «մարդիկ» չինջը:

Այստեղ, ուրեմն, Արծրունին մեծ նշանա-կութիւն չէ տալիս ո՞նի, յօդուածի լեզուին: Բայց որ մայրենի լեզուի նշանակութիւնը հասկանում է, այդ երևում է նրանց, որ այդ լեզուի մասին ասում է թէ մենք նրան առեւի լաւ ենք հասկանում բան թէ մի ուրիշ լեզու: Մայրենի լեզուի ամենազլխաւոր ոյժն էլ հենց այդ է: Եւ եւսկատեցէ, Արծրունին գիտէ, որ հայերից իրանց հասարակական և ընտանեկան յարաբերությունների մէջ օտար լեզու են գործ ածում (օրինակ, վրացերէն), բայց և այնպէս գիտէ, որ այնուամենայնիւ, հայերէն պէտք է գրել ու խօսել, որովհետեւ հայերէնը, իբրեւ մայրենի լեզու, առեւի հասկանալի է:

Պ. Յովհաննիսյանն ասում է թէ Արծրունին մոռանում է «որ լեզուն ազգի մարմնացած հոգին է»: Ոչ, չէ մոռանում Արծրունին: Եթէ մեր բերած փաստերը բաւական չեն, պ. Յով-հաննիսյանին ցույց կը տանք «Աշխարհաբարի» նորաձեռնութիւններ» յօդուածը: Ահա ինչ է ա-սում այդտեղ Արծրունին.

«Լեզուն արտայայտութիւն է ազգի հասարակական կեանքի: «Մեր աղբաւ, անտաշ աշխարհաբար նմանապէս արդեւս է մեր արքայա հասարակական կեանքի: «Մենք տեսնում ենք, որ մի ազգի հասարակական զարգացման ժամանակ փոխվում են և այն ազգի բարք ու վարքը... և այս երկուքը ազդեցութիւն ու-նի և լեզուի զարգացման վրա...»

Այս փաստերը, կարծում ենք, առեւի բան բաւական են ցույց տալու համար թէ պ. Յով-հաննիսյանը մեծ անփութութեամբ է վերա-բերվել իր կարգացած հատորին:

(Կը շարունակվի)



վեց Օկոնոյի մասը: Մոյից «Նիսոմարուն»  
օգնութեան գնաց:

Նիս-ՉժՈՒԱՆ: (Բէյաթ): Չինացի փա-  
խստականները հազարներ են, որ հապճա-  
ցիները ափ են հանել մեծ զօրք Գայճօուից  
մի քանի միոն դէպի հարաւ-արեւելք տեղի  
ունեցաւ զօրեղ ձակադաշտման:

Կ. ՊՈԼԻՍ: (Կօրք, Բիւրօ): Մուշում կողոպ-  
տել են հայերի 31 խանութներ: Մուշում  
զտնված համարեա առանց որ և է ապրուստի  
միջոցի հայ փախստականների թիւը մօտ  
4000 է: Միայն Փրանսիական կոնսուլի միջա-  
մտութեան շնորհով Մուշում գործը չը հասաւ  
մեծ արհեստագործներ: Բաղարի շրջակայքում  
և Մուշի սանջակում շարունակվում են հայե-  
րի դէմ գազանութիւնները: Օրմանեան պատ-  
րիարքը բոլոր յայտնաց:

Կ. ՊՈԼԻՍ: Բիւրօյի վալիս պնդում է, որ  
միայն 200 յեղափոխականներ են սպանել զին-  
ւորները Մասունի շրջանում: Միւստրների  
խորհուրդը քննեց զորքի դրութեանը Բիւրօյի  
վիլայէթում: Մօտաւոր ապագայում կը փո-  
խադրեն վալիին: Հաւատարմութեամբ են, որ սուլ-  
թանի փեսայ Բէյաթ-փաշան արդէն պաշտօ-  
նադուրկ է արված և արտօրված է Թաթի,  
Արաբիայում:

5 յունիսի  
ՊԵՏԵՐՆՈՒՐԳ: Յունիսի 4-ին Հեռաւոր Արե-  
ւելքից պաշտօնական տեղեկութիւններ չեն  
ստացվել: Յունիսի 4-ին Գատչինում Բարձ-  
րագոյն ներկայութեամբ կայացաւ զօրահան-  
դէս Նորին Մեծութեան Թագուհի Կայսրուհի  
Մարիա Յէօգօրօֆայի կիրաւրեան գլար-  
դիական գնդի՝ օժեղով գնդի 200-ամեակի ա-  
մբթով նուիրված զօրով: Թագաւոր Կայս-  
րը Բարձրագոյն քարհանձեց հրամայել նա-  
ւատօրմի ինկերներին, որոնք չեն կարողացել  
հասնել միջմանի արտիսանին, իրաւունք տալ  
ընտելիւն բռնելու պարագային աստիճանի՝  
հաւատարմի պահեստի օֆիցերի ծովային մասի  
համար:

ՏՕԿԻՐՈ (Բէյաթ): Կօկուրա եկաւ «Իլէ-  
մարու» շոգենաւը «Մաթօմարու» կենդանի  
մնացած զինւորներով: Հաստատվում է, որ  
«Մաթօմարուն» չէ ընկղմվել, այլ «Նիսոմար-  
ուն» շոգենաւը կապեց նրան իր ետեկից: Մա-  
թօմարի մօտ Մազա ոստիկանական կայա-  
րանից զեկուցանում են, որ լավում է թնդա-  
նօթագրութիւն ծովի կողմից: Ենթադրում են,  
որ հապճապեան էսկադրան հանդիպեց ռուսա-  
կանին և ձակադաշտում տեղի ունի:

ԳԼԱՉԳՐՈ (Բէյաթ): «Իլիդիլ» շոգենաւը,  
2,873 տօնն ծաւալով, ծախված է հապճապի-  
ներին 21,500 ֆունտ ստէրլինգով:

ՄՈՒԿԴԵՆ: Յունիսի 4-ին ժամանեց Մեծ  
Իշխանուհի Մարիա Պաւլօֆայի առողջապա-  
հիկ գնացքը, որ բերել է Վաֆանգօուի մօտ  
յունիսի 1-ի ձակադաշտում ժամանակ վի-  
րաւորված 10 օֆիցերներին և 464 զինւորնե-  
րին: Վիրաւորներին տեղափոխեցին Նորին Մե-  
ծութեան Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա  
Յէօգօրօֆայի Անուան հիւանդանոցում և  
Մուկդէնի կենտրոնական զինւորական հիւան-  
դանոցում: Այդ գնացքի ետեկից դէպի հիւսիս  
անցաւ Մեծ Իշխանուհի Անատոսիան Նիկո-  
լայիցիայի առողջապահիկ գնացքը, որի մէջ  
20 վիրաւոր օֆիցերներ և 170 վիրաւոր զին-  
ւորներ կան:

ԿՕՎԵՐՈ: Վիլիամիւրում զարհուրելի հրդեհ  
ծագեց: Այրվեց բաղարի 2/3 մասը, մօտ 700  
տուն: Նահանգի կառավարիչն այստեղից ու-  
ղարկեց հրդեհաշէնքերի մէջ մասը և միջոցներ  
ձեռնարկեց այրվածներին օգնելու համար:  
Դուրման տուեց 1700 բուրլի սկզբնական պէտ-  
քերի համար: Վիլիամիւրի քիսար մօտ մէկ մի-  
լիօն է: Այրվեցին մէջքաների վարչութիւնը  
և քաղաքային հիւանդանոցը: Հիւանդները  
փրկված են: Մարդկային զոհեր չեղան:

ՄՕՍԿՎԱ: Քաղաքում նախնական կրթու-  
թիւնը հանրամատչելի դարձնելու նպատակով  
բաղադրային վարչութիւնը այս աշնանը բաց է  
անում 20 նոր դպրոցներ և 1905 թւին էլ 15  
հասո:

ԲԵԼԳԻՍԿԱ: Յունիսի 5-ին տեղի կունենայ  
բօլաբաղական իշխանի և Պետր թագաւորի  
միջև երկրորդ տեսակցութիւն:

ՄԱՐԱԳԼԵՐ: ԱԼԷՔՍԱՆԴՐՈՍ ԲԱՆԱԹԱՐ  
Հրատարակիչներ: ԹԱԳՈՒՀԻ ՏԵԳՐԱՆԵԱՆ  
ԻՍՏԱՆԿԱ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺ. Վ. ԱՐԺՐՈՒՆԻՆ  
Անցնալ տարիները օրինակով, այս ամառ էլ  
անդադրվում է կովկասեան հանքային ջրերը,  
ՊԵՏԵՐՆՈՒՐԳԻՆԻՍ, որտեղ ընդունում է հի-  
ւանդներին: Патиторски, Верхний бульварь, д.  
Кня. Гирей. (2. 2.) 2—10

Յ Ե Ր Ե Կ Վ Ա Յ

ՀԱՅԴԱՄԱՍՏԵՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Թիֆլիսի Հակա-ալիօթական ընկերութեան Հա-  
լարի բաժանմունքի

ՄՈՒՐԱՇԿՈՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Կիրակի, յունիսի 6-ին

ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԵՐՆԵՐԻ

ՄՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Բարեհաճ մասնակցութեամբ օր. Նիկիտանի,  
տիկ. Չարէլի և պ. Ամօ-Նարազեանի

Կ Ե Ր Ե Կ Վ Ա Յ

Ե Ր Ե Կ Վ Ա Յ

ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ

Դրամա 4 գործող. հեղ. Նիկիտան, Թարգմ.  
Մանասեան:

Մասնակցում են.—Տիկ. Թարգմ., Սօֆիա,  
օր.օր. Նիկիտան, Բէգլանեան, Մարգարիտ,  
պ.պ. Ամօ-Նարազեան, Դրիգորեան, Լաշա-  
րեան, Յարութիւնեան, Սարեան, և ուրիշները:

Տեղերի գինը 5-ից մինչև 40 կօպէկ:

Սկիզբն է 11 ժամին առաւօտեան:

Այգում կը նուագէ երաժշտական խումբը:  
2—2 Բէթիօր օր. Նիկիտան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

Երաժշտական և պ.պ. անդամներին և կանգնեա-  
ներին, որ նրանց ընտանիքները, համաձայն  
կանոնադրութեան § 17-ի կը թողարկվեն ժո-  
ղովարանի ամառային շինութիւնը որոշված  
կօնտրմարկաներով, որ տրվում են ժողովա-  
րանի գրասենեակում ամեն օր երեկոյան  
ժամը 9-ից մինչև 11-ը: Կ. 3—3

Ն. Շ. Ա. Բ. Բ. Ա. Վ. Ա. Մ. Ե. Ա. Ն. Ի

Ֆինանսները մինիստրի վարչութեան տակ  
գտնվող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՈՎԱՐԱՆԸ

(Թիֆլիս, Նիկիտանեան, 46, սեփ. տուն)

Արանով յայտարարում են, որ ֆինանսների  
մինիստրութեան կրթական մասի նահանգա-  
կան տեսչի թղթաւորութեամբ՝ 1904 թւի սեպ-  
տեմբերի 1-ից, նոյն կուրսերին կից, բացվում  
են առանձին նախապատրաստական և լրացու-  
ցիչ կուրսեր թուրքալեզուների և ռուսաց լե-  
զուից բէջ պատրաստութիւն ունեցող անձերի  
համար: Ընդունելութիւնը նշանակված է օգոս-  
տոսի 15-ից սկսած ամենաին օր: Դասընթացը  
4 ամսեայ է: (Կ. 4.) 2—2

Բ. Ժ. Ե. Կ. Ա. Պ. Ե. Տ.

Ա. ԲԱԹԱՆԵԱՆ

(Ներքին և ներվային հիւանդութիւններ)

Ընդունում է հիւանդներին Կովկասեան հան-  
քային ջրերում—Պետրիգօրսկում. Верхний  
бульварь, № 14. д. Кня. Гирей. (Կ. 4. 4.) 2—20

Թիֆլիսի համաճարակային ազնուականութեան  
պաշտօնախումբը խնդրում է նահանգի ազնուակա-  
նութիւնից շնորհ բերել ազնուականութեան  
Արտակարգ նահանգական ժողովին, որ տեղի  
է ունենալու յետագայ յունիսի 12-ին, ցերեկ-  
վայ ժամը 1-ին իշխան Կօրուլովի շէնքի մէջ  
(նախկին Արշակունի, Գրիգորօֆայի փո-  
ղոց), ընկնելու և հաստատելու Թիֆլիսի Ազ-  
նուականների Հոգային Բանկի եկամուտների  
բաշխման հաշիւները ծրագրերը:  
մ. 25, յ. 6, 12. 2—3

Հ. Բ. Ա. Ի. Ե. Բ.

Յունիսի 6-ին, կիրակի, ժամը 12-ին, եր-  
րորդ և վերջին անգամ նշանակված է վաղի  
եկեղեցու ծխականների ժողով, ուր կը կար-  
դացվի երէցփոխ պ. Բուդաշեանի՝ եկեղեցա-  
կան վերջին տարիների հաշիւների մասին զե-  
կուցում և կը լինի ընտրութիւն:

Ուստի պ.պ. ծխականները հրաւիրվում են  
իշխալ եկեղեցուն՝ լսելու այդ զեկուցումը և  
մասնակցելու ընտրութեան:

Դործակալ ա. մ. Թիֆլիսի հայոց եկեղեց.  
Դրիգոր ա. քահ. Մանգալունի

(ո. 2. 4.) 3—3

Թէհրանի «ՓԱՐՈՍ» ակցիօնիական ընկերու-  
թիւնը պնդում են իր տպարանի համար

ՄԻ ՀՄՈՒՍԻ ԳՐԱԾԱՐԻ

ՄԻ ՎԱՐՊԵՏ ԿԱԶՄԱՐԱՐԻ

և ՄԻ ՏՊԱՐԻՉԻ (Նախադիւրի):

Կը արվի ճանապարհածախ: Չենտու ու-  
ճիկներ: Յանկացողները կարող են զիմել հե-  
տեալ հասցեով և առաջարկել իրանց պաշ-  
տանները:

Administration de l'Imprimerie «Pharos»,  
Téhéran. Կ. 4. 4. 2. 9—10

ՎԻԵՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտա-  
պրօֆեսորներին հետ Ռուսաստանից եկող հի-  
ւանդներին համար:

Հասցեն Wien, Spiegelgasse, 3, IVstock.  
37—50

ՉԱԲ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՆՈՒՄ»

վ ա ճ ա ո Վ ու լ ա լ

1. Արքայի տպագրած պատկերազարդ  
մեծ Աստուածաշունչ, կաշեկազմ  
և ոսկեզօծ . . . . . 120 ռ.
  2. Թուրաններ, կազմակ 10 հատոր. . . 35 »
  3. Գագուրի Բարիլու 8 հատոր. . . 16 »
  4. Պաժույն զերկուն անկազմ 12 հ. . . 12 »
  5. Ժօզէֆ Պալամո 8 հատոր. . . 10 »
  6. Մօնթէ Գրիպույի որդին 6 հատոր. . 7 »
  7. Թագուհոյն մահուկը 4 հատոր. . . 5 »
  8. Սերանոյ, Գ. Գ. Գ. Տիւարի. . . 5 »
  9. Մովսէս Նորենացի պատմութիւն,  
Վենետիկ. . . . . 6 »
  10. Պատմութիւն Աղուանից աշխարհի,  
Մկրտիչ Էմիր. . . . . 2 »
- Ճ ա ն ա պ ա ր հ ա ծ ա խ ս ր գ ն ո ղ ի վ ր ա :  
(ու. 4. Կ. Կ.) 1—3

Տ. Պ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Ն.

Գործերին հմուտ անձնաւորութիւն՝ որոնում է  
տպարանի կառավարչի կամ օգնականի պաշ-  
տօն: Պատրաստ է նաև գնալ ուրիշ քաղաք:  
Հասցեն՝ Тифлис, магазинъ обуви Сафарова,  
противъ Артистич. Театра. 1—1

Հ. Բ. Ա. Ի. Ե. Բ.

Կիրակի, յունիսի 6-ին, առաւօտեան 10 ժա-  
մին, ս. պատարագից յետոյ, քաղաքի ս. Մի-  
նաս եկեղեցում նշանակված է երկրորդ և վեր-  
ջին ժողով, Իշխող Աղեքսանդրեան Դաւթեան-  
ցին նոյն եկեղեցում շտառնի զարկ ընդունե-  
լու համար: Ուստի արանով յարգալարաւ հրա-  
ւիրվում են նոյն եկեղեցու պ.պ. ծխականները  
նոյն եկեղեցին՝ որոշված օրը և ժամին՝ ժողո-  
վին մասնակցելու:

Թիֆլիսի հայոց եկեղեց. ք. մասի գործակալ՝  
2—2 (Կ. 4.) Ղևնդ քահ. Մամիկոնեանց

ՀԱՐԱՐՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ „ՈՐՈՏԱՆ“ ԸՆԿԵՐՈՒՄԻՆ

Սրանով պատիւ ունի յայտնելու իր բաժնետէրերին, որ սկսեալ ներկայ թւականի յունիսի 3-ից  
իւրաքանչիւր օր, բացի տօն օրերից, Ընկերութեան գրասենեակում (Կօլլեքտիւսկայա փո-  
ղոց, տուն վիտուշինսկոյ) առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը տեղի կունենայ՝ 1) դիվի-  
դենտի բաժանումը, հաշիւով տասն և հինգ (15) բուրլի ամեն մի բաժնին և 2) «Արամագր»  
ընկերութեան ակցիաների բաշխումը, հաշիւով իւրաքանչիւր տասը (10) բաժնին եօթ (7)  
ակցիա: Կը բաժանվին նաև անդորրագրեր «Արալ-Կասպեան» ընկերութեան ակցիաները  
ստանալու համար:

Թէ դիվիդենտը և թէ վերոյիշեալ ակցիաները և անդորրագրերը ստանալու համար պա-  
հանջվում է միայն ներկայացնել ընկերութեան բաժնեթղթեր, որոնց վրա վարչութիւնը կը  
դնէ պատշաճաւոր կնիքները: Օտարաբաղաւորացի թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրա-  
սենեակը, ուղարկելով իրանց բաժնեթղթերը նրանց վրա պատշաճաւոր ցուցմունքներ անելու  
համար: (Կ.) 1—4

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՆՏՈՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԿՈՒՐՍԵՐԸ Թիֆլիսի առևտրական դպրոցին կից:

(Հիմնադրող տարի)

Կուրսերում աւանդվում են. հաշուապահութիւն, առևտրական թուղթերի խաղ, առևտրական  
գրագրութիւն և առևտրական իրաւունք: Պարագմունքների սկիզբն է 1904 թւի սեպտեմ-  
բերի 15-ից: Դասընթացը տևում է 6 ամսից ոչ պակաս: Զբաղմունքները երեկոյան են և  
շաբաթը 3 անգամ: Ունիւղիւր կարող են լինել երկու սեռի գրագէտ անձեր:

Վճարն է 40 բուրլի դասընթացի համար: Թիֆլիսի առևտրական դպրոցի տեսչի անու-  
նով խնդիրներ ընդունվում են ամեն օր ժամը 10—1-ը, նոյն դպրոցի գրասենեակում:  
(Կ.) 1—5

Թիֆլիսի առևտրական դպրոցը

Ա. Ի. ՄՍԵՐԱՇԵՎԻ ԱՆՈՒՆՈՎ

Գտնվում է ֆինանսների մինիստրութեան վարչութեան տակ: Հիմնված է Թիֆլիսի առև-  
տրականների ընկերութեան ձեռքով:

Դասընթացը եռամսեայ է: Առաջին դասարան ընդունվում են առանց քննութեան քաղա-  
քային դպրոց աւարտողները (1872 թւի կանոնադրութիւնով): Ուսման վճարն է տարեկան  
80 բուրլի:

Դասընթացն աւարտողները իրաւունք ունենում են:

Անձնական պատուաւոր քաղաքային կոչում՝ առևտրական ձեռնարկութիւններում 5 տա-  
րի ծառայելուց յետոյ. պետական ծառայութեան մէջ—իրաւունք առանց քննութեան առաջին  
դասի չին ստանալու: զինւորական ծառայութեան համար—երկրորդ կարգի զարգացների դաս-  
ընթացն աւարտողների իրաւունքներ:

Պարագմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ից: Խնդիրները, մեղքերական, կոչման  
և ծաղիկ պատուաւորման վկայագրերով միասին, ընդունվում են Թիֆլիսի առևտրական դպ-  
րոցի գրասենեակում ամեն օր, ցերեկը ժամը 10—1:

(Կ.) 1—5

Իժման, Օգոստիս և Անհրաժեշտ

Ամեն մարդու համար, ով ուզում է համոզվել իսկութեան մասին քող գնե մեր առևտրական  
ցնից հղանալու կամ կնոյ (իր ցանկութեամբ) արժեքաւոր իրերի կօպլեկս, որոնց համար՝  
մրցումը խեղդելու և պահանջում եղած անպիսի քանակութեան ապրանքները հնար եղածին  
չափ շատ ծախելու համար՝ ստիպւած եմ հաւանակել եման վաճառք և առաջարկում ենք սովո-  
րական 19 ռ. 45 կ. գնի փոխարէն միայն 6 ռ. 78 կ., համապարհաճախով միասին՝ հետեւեալ  
10 արժեքաւոր իրերի համար. 1) ժամացոյց սեւ ազաւազայի պողպատից—աղամարդու կամ  
կանանց կամ սղամարդու վերադիր ոսկուց (ճաշակով ոսկեգօծած), ոսկուց չը գանադանվող,  
լաւ միզանիզով, ժընէվի շէնք, ուղիղ ճանելու համար 8 տարեկայ երաշխաւորութիւն 2)  
կաշուէ քաւի՝ ժամանակից փայլունից պահպանելու համար: 3) Նորայ—ճոր ոսկուց մէջը դա-  
տարկ կամ նիկկիլից, կամ կանանց վիզը գցելու համար: 4) Բերօյի «կողմնացոյց» կամ «քի-  
նօկ» պիկանտ տեսարաններով կամ ուրիշը: 5) Իրմապանակ կաւե, մի կտորից՝ 7 բաժնե-  
մունքներով, միքենայական փայլունով, պարունակում է կնիք անուն, հայրանուն և ազգա-  
նուն կայանելու համար: 6) Ամիլի ամաւալաւ «Solingen» պողպատից կամ գրգռանի խնայողա-  
կան արկղիկ: 7) «Բմպերիպ» սեփեփօկայ՝ 25 պատկերով կամ գրգռանի երկեսական ձօնաւ  
կամ կաշուէ պօրս-սիգաւ կամ կաւե պողպատի գօտուց կարելու համար, կամ 56 պրօքի  
ոսկուց մասանի: 8) Մեքենական ինքնակալ լուցիկ աման (փոխարինում է լուցիկով) կամ  
քրպապանակ արտաամմանեան կաշուց թղթիկի և այլեւորմաների համար, կամ մի զոյգ զին-  
քեր 56 պրօքի ոսկուց: 9) Լաւացոյց պողպատէ գրչանաւ կամ ծալովի միւրաւ կամ դօկաթ Գօլի  
ծխաւոր: 10) Գրչանի գրչիւ գործի կամ նետաւոր կողերը կօպլեկս և այլն և պա-  
տուէրի դուրմարի ձրի պրէկաւ. ծածկված ժամացոյցով 1 ռ. 50 կօպ. աւելի արժէ: Պահանջ-  
ները կատարվում են անպայաղ, վերադիր վճարով, առանց կանխվճարի: Դիմել. Торгово-  
Экспортному Дому Т-ву Парижский Лувр, въ Варшавѣ 255. (մ. 25, յ. 6, 18, 30) 2—4

Ամեն մարդու համար, ով ուզում է համոզվել իսկութեան մասին քող գնե մեր առևտրական

ցնից հղանալու կամ կնոյ (իր ցանկութեամբ) արժեքաւոր իրերի կօպլեկս, որոնց համար՝  
մրցումը խեղդելու և պահանջում եղած անպիսի քանակութեան ապրանքները հնար